

ՆԱՄԱԿ ԱՂԻՔԵՋԱՆԻ...

Պարոն նախագահ, ամեն անգամ հեռուստացույց նայելիս, կարդալով կամ մեծերի պատմածները լսելով, մտում եմ զարմացած: Դուք ամբողջ ժամանակը միայն Ղարաբաղի եւ պատերազմի մասին եք խոսում: Ուրիշ ոչ մի բանի մասին չեք մտածում: Կարծես ուրիշ պրոբլեմներ եւ խնդիրներ չունեք: Ուրիշ ոչ մի հարց կարծես Ձեզ չի հուզում:

Ես երբեք ադրբեջանցի չեմ տեսել, ես Ձեր մասին, Ձեր երկրի մասին չեմ մտածում: Իմ ծնողները նույնպես Ձեր մասին, Ձեր երկրի մասին չեն մտածում... Չեմ կարողանում հասկանալ՝ ի՞նչ եք ուզում մեր երկրից: Լսել եմ, որ Դուք երբեք Արցախում, Ղարաբաղում չեք եղել, մեր Գանձասարը, Դադիվանքը, Ամարասը չեք տեսել, բայց շարունակ մտածում եք մեր երկիրը նվաճելու մասին: Չեմ հասկանում, Ձեր հողերը քի՞չ են, Ձեր ինչի՞ն է պետք Ղարաբաղը: Իմ պապիկից եմ լսել, որ պատերազմից առաջ, նույնիսկ 50 կամ 100 տարի առաջ երբ այստեղ ադրբեջանցիներ կային, երբ մահանում էին, նրանց Ղարաբաղից դուրս էին տանում եւ թաղում նրանց իսկական հայրենիքում, որովհետեւ գիտեին, որ սա իրենց երկիրը, իրենց հողը չէ: Դրա համար այստեղ գրեթե ադրբեջանցիների գերեզմաններ չկան...

Հայրիկս ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմի մասնակից է: Ես պատերազմը չեմ տեսել, բայց մեծերի պատմածներից գիտեմ, որ դա շատ վատ, շատ սարսափելի բան է, եւ երբեք չէի ցանկանա այն տեսնել: Համոզված եմ, որ ադրբեջանցի ոչ մի երեխա նույնպես չի ցանկանա պատերազմ տեսնել: Բայց մեծերից շարունակ լսում եմ, որ եթե պատերազմ լինի, իրենք նորից պաշտպանելու են մեր երկիրը: Իմ ընկերներից մեկն ասում է, որ եթե չթողեն գենը վերցնի, ինքը ֆրանսիացի Գավրոշի պես օգնելու է մեծերին, որ պաշտպանեն մեր հայրենիքը: Ես նույնպես, որքան հնարավոր է, օգնելու եմ իմ ծնողներին...

Մեծերից, տարբեր մարդկանցից բազմաթիվ անգամ լսել եմ, թե ինչպես է ամեն ինչ եղել: Արցախցիները խաղաղ ցույցի են դուրս եկել եւ ասել, որ ուզում են մեր Արցախ հայրենիքը միանա Մայր Հայաստանին, որովհետեւ Ադրբեջանը մեզ համար օտար երկիր է, եւ մեր հողը 70 տարի առաջ Ստալին անունով մի ղեկավար դիտմամբ տվել էր Ադրբեջանին: Իսկ ձեր հայրենակիցները, ի պատասխան դրա, Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում եւ այլ քաղաքներում սկսել են հայերին կոտորել ու վտարել իրենց տներից: Դրանով չբավարարվելով, Ձեր հայրիկը պատերազմ է սկսել իմ հայրենի Արցախի դեմ, բայց, չնայած շատ ուժեղ է եղել, շատ զինվորներ եւ տանկեր է ունեցել, այդ պատերազմում պարտվել է:

Ես մեծերին հարցրել եմ, թե ինչպես է պատահել, որ այդքան ուժեղը պարտվել է, իսկ նրանք պատասխանել

են՝ որովհետեւ մենք մեր հողը, մեր հայրենիքն ենք պաշտպանել, իսկ ադրբեջանցիները հարձակվել են մեր երկիրը նվաճելու, մեր կյանքը եւ ազատությունը խլելու համար...

Եթե մեր երկիրը նվաճելու համար պատերազմ սկսեք, ողջ հայ ժողովուրդն է ոտքի կանգնելու եւ մեր հողը պաշտպանելու: Բայց համոզված եմ, որ եթե պատերազմ սկսեք, Դուք, Ձեր երեխաները, Ձեր բարեկամներն ու ընկերները չեն մասնակցելու այդ պատերազմին, այլ շարքային ադրբեջանցի երիտասարդներին եք ուղարկելու մեր երկրի վրա: Ես գիտեմ, որ եթե պատերազմ լինի, մեզնից շատերը, անգամ երեխաներ ու կանայք, կարող է զոհվեն կռվի ժամանակ, շատ երեխաներ կարող են որբ մնալ, բայց այդ պատերազմում զոհվելու են նաեւ հազարավոր ադրբեջանցի երիտասարդներ եւ բազմաթիվ ադրբեջանցի երեխաներ նույնպես որբ են մնալու: Դա՞ է Ձեր ուզածը, դրա համար՞ եք ամեն օր մտածում պատերազմի եւ Ղարաբաղը նվաճելու մասին...

Եթե այդքան շատ փող ունեք, ինչո՞ւ եք շարունակ գենը գնում, դրանով Դուք կարող եք այնպիսի կյանք կառուցել Ձեր երկրում, որ Ձեր ժողովուրդը (հատկապես նրանք, ովքեր Ձեր հայրիկի կողմից սկսած պատերազմի պատճառով փախստական են դարձել) երջանիկ ապրի եւ ոչ մի պրոբլեմ չունենա: Դա՞ է լավ, թե՞ նրանց պատերազմի դաշտ ուղարկելը...

Ես շատ եմ ցանկանում, որ պատասխանեք իմ նամակին եւ անկեղծ ասեք, թե ինչու եք ուզում նվաճել իմ հայրենիքը, որը ձերը չէ: Ձեր հողերը չե՞ն հերիքում Ձեզ:

Ադելինա Ավագիմյան, 13 տարեկան, ԼՂՀ, Ստեփանակերտ, 10.08.11

Ստեփանակերտոցի դպրոցական Ադելինա Ավագիմյանի կողմից Ադրբեջանի նախագահին գրված նամակին, ինչպես հայտնի է, պատասխանել են Իլիամ Ալիեւի աշխատակազմից: Հայ լրագրողները հանդիպել են արցախցի դպրոցականին եւ փորձել պարզել, թե պատասխանը որքանով է բավարում իրեն: Ադելինան լրագրողներին ասաց, որ դա պատասխան չէ, Ադրբեջանի նախագահի մոտ աշխատող Ասլանով ազգանունով մի մարդ իր նամակից քսան անգամ մեծ նամակ է գրել, բայց իր հարցերից ոչ մեկին չի պատասխանել:

Եթե իմանայի, որ այդպես են պատասխանելու, չէի գրի: Իմ հարցերին պատասխանելու փոխարեն սկսել են հեքիաթներ պատմել: Նրանք կարծում են, թե ես պատմություն չգիտեմ, եւ ինձ փորձում են խաբել իրենց սուտ պատմություններով:

Ավելի շատ ինձ դուր չի եկել, որ ինձ պատասխանել են իբրեւ Ադրբեջանի քաղաքացու, իսկ Ստեփանակերտն էլ Խանքենդի են անվանել: Կարծես այդ օտար մարդիկ պիտի որոշեն մեր քաղաքի անունը», - լրագրողներին ասաց Ադելինա Ավագիմյանը:

Իրանահայ համայնք

«Իրանահայեր» կայքէջը հակերների թիրախ



«Արաքս շաբաթաթերթ». Թեհրան, 22.08.2011: օգոստոսի 21-ի, առավոտից սկսած իրանահայ աշխույժ լրատվական կայքէջերից մեկը՝ «Իրանահայեր»-ը, հակերների ծանր հարձակումների թիրախ դարձավ, որի արդյունքում նույն օրվա կեսօրվանից անջատվեց կայքէջ-ընթերցող կապը: Վերջին շրջանում նամանավանդ, Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի թալանի ու նաև 5-րդ Համահայկական խաղերի կապակցությամբ աշխույժ իր լրատվությամբ այցելու-ընթերցողների մեծ շրջանակ էր ձեռք բերել «Իրանահայեր»-ը, ինչը վստահաբար շատերին դուր չէր գալիս թուրքերից սկսած ու վերջացրած մենատիրությամբ ու անգիտակցությամբ տառապող հայերով: Այնուամենայնիվ, կայքէջի պատասխանատուները վերականգնել են այն :

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու Սպահանի հայոց թեմը ինչո՞ւ են լռում Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքից թալանված սրբապատկերների մասին

- Սպահանի ՀԹ առաջնորդարանը հաստատում է թալանված սրբապատկերների լուրը «Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 07.07.2011: Ըստ հայաստանյան լրատվամիջոցների, հունիսի 12-ին, Լոնդոնում, երկու անհայտ հայ անձինք փորձել են վաճառքի հանել հայկական թանգարանային հինգ սրբապատկերներ՝ ա- «Սուրբ թաղումն Տիառն մերոյ Յիսուսի Զրիստոսի», Սարգիս Բիծակ, 1329թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16 * 23 սմ.
 - բ- «Վերնայտուն», (Ոտնալվա) Կիրակոս Սյունեցի, 1300թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16 * 23 սմ.
 - գ- «Հոգիգալուստ», Կիրակոս Սյունեցի, 1330թ. մագաղաթի վրա, չափսը՝ 16 * 23 սմ.
 - դ- «Ավետարանիչ», Սարգիս Աբեղա, 1600թ. թղթի վրա, չափսը՝ 18 * 25 սմ.
 - ե- «Ավետարանիչ», Հակոբ Ջուղայեցի, 1607թ. թղթի վրա, չափսը՝ 18 * 25 սմ.
- ու նաև, կտավի վրա, երկու յուղաներկ նկարչություններ:



Հարցի մանրամասն պարզելու համար, թերթին խմբագրությունը կապ հաստատեց Սպահանի հայոց թեմի առաջնորդարանի հետ, մեր հարցումին ի պատասխան առաջնորդարանի գրասենյակի պատասխանատու Բարթոլոմե Բաղումյանը հաստատելով սրբապատկերների թալանի լուրն ասաց. «Այո, լուրը ճիշտ է, հաստատում ենք»: Բաղումյանն, իհարկե, չկարողացավ հստակեցնել յուղաներկ նկարչությունների պարագան. «Դրանց մասին

դեռ հստակ բան չենք կարող ասել» և ավելացրեց նաև, որ հարցը հետևում են եւ, ի գարմանս մեզ, շեշտեց, որ «անպայման սրբապատկերները վերդարձվելու են»:

Նկատի ունենալով, որ սա քանիտորոջ անգամն է ինչ թալանի է ենթարկվում Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանը, հարց է առաջանում. - Ինչո՞ւ, երեք շաբաթ դեպքից հետո, լուրի մասին դեռ լուռ են մնում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու Սպահանի հայոց թեմի առաջնորդարանը, հակառակ նրան որ հունիսի 13-ին արդեն իսկ իրենց տեղեկացվել էր այդ մասին: Չէ որ լռությունն ինքնին թալանին մեղսակցել է նշանակում: - Արդյո՞ք ոստիկանությունն հարցից տեղյակ է: Իսկ եթե ոչ, ինչո՞ւ: - Քանի՞ թանգարանային նմուշ է թալանվել վանքից, եթե իհարկե դա հայտնի է Սպահանի ՀԹ պատասխանատուներին:

Պաշտոնապես հաստատվեց Սպահանի Սբ. Ամենափրկիչ վանքի թալանված սրբապատկերների լուրը

«Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 09.07.2011: հուլիսի 9-ին, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը, ուշացումով, հանդես եկավ պաշտոնական հաղորդագրությամբ, ուր ասվում է . «Սպահանի հայոց Թեմական խորհուրդը մեր ժողովրդին յայտնում է, որ տեղեկացել է՝ Անգլիայում աճուրդի են դրել Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի ձեռագրերից առանձին մանրանկարչութան էջեր: Ամփոփապես կապել ենք մեզ վստահած մասնագետ անձանց հետ՝ աւելի մտկից ստուգելու հարցը եւ մեզ տեղեկ պահելու, որպեսզի օրինական միջոցներով խնդիրը պարզենք: Առ այդ՝ հարցը խորհրդապահական ձեռով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով, եւ ներկայ փուլում ստուգում են հանգամանքները՝ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով: Այսու մեր ժողովրդին դիմում ենք, որ անհիմն մեկնաբանություններից խուսափեն եւ վստահ լինեն, որ Սպահանի հայոց թեմի ազգային մարմինները առաջնորդ Սրբազան Հոր գլխաւորութեամբ նախանձախնդիր են եւ այս հարցը հետապնդելու են մինչեւ բարւոք լուծում»: Իհարկե, հայկական առածն ասում է «Լավ է ուշ, քան երբեք», բայց հիմնական հարցը անհասկանալիորեն մնում է չպատասխանված: Ինչու Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը չի հստակեցնում, թե երբ իրականացել թալանը և եթե մամուլը չբարձրացներ թալանված սրբապատկերների լուրը, ապա երբ էր խոսելու այս մասին: Իսկ ինչ նորություն կա այս հաղորդագրության մեջ: Այստեղ բերված է «աճուրդ» բառը, որը չի օգտագործվել «Արաքս»-ի եւ հայկական այլ լրատվամիջոցների կողմից, ինչն ապացուցում է, որ հարցերը ավելի զարգացած են քան մամուլում արձարծվածը: Այդ դեպքում հնարավոր էր Ինտերպոլի միջոցով հարցը շատ արագ լուծել: Սակայն մյուս կողմից հաղորդագրության ոճը ենթադրել է տալիս, որ ցայժմ հարցի մասին չի տեղեկացվել ոստիկանությունը եւ թվում է, որ Թեմական խորհուրդը իր սեփական միջոցներով է փորձում հարցը փակել: Ու նաև, որ երկու հանցագործի հարց չկա, ինչպես գրել էր մամուլը, այլ միայն մի, որի առնչությամբ ՍՀԹ Թեմական խորհուրդը

վստահեցնում է. «Առ այդ՝ խորհրդապահական ձեռով հետապնդում էինք՝ յանցագործին ի յայտ բերելու՝ գործընթացը չվնասելու նպատակով, եւ ներկայ փուլում ստուգում են հանգամանքները՝ ձեռագրի էջերը վերադարձնելու նպատակով»: Ավելացնենք նաեւ, որ վերոնշյալ հաղորդագրության հեղինակները աշխատել են հանցագործին «խորհրդապահական ձեռով» հետապնդելու անհիմն բացատրությամբ արդարացնել իրենց՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդի, երկար և անհասկանալի լռությունը եւ ինչու չէ նաեւ մեղսակցությունն այս գործում: Վերջում, մեր կողմից ուզում ենք շեշտել, որ ամենայն անկեղծությամբ հավատում ենք, որ Սրբազան Հայրը իր կարելին կանի սրբապատկերների վերադարձնելու համար: Դրանով հանդերձ կարծում ենք՝ հանցագործությունը պարզելու բանալին նախեւառաջ ոստիկանության մոտ պիտի փնտրել և ոչ թե «խորհրդապահական» անբացատրելի գործունեությամբ:

**ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ
«ՍՏԱՏԻԱԾ ՄԻ ԳՐՈՒԹԵԱՆ» ԱՌԻԹՈՎ**

Ուրախալի է որ Մամուլը երբեմն անդրադառնում է գաղութում պատահած եւ հաճելի եւ տհաճ դեպքերին: Սակայն աւելի ուրախալի պիտի լինէր եթէ իր անդրադարձները ճիշդ եւ դաստիարակիչ լինէին:

Արդարեւ «Ալիք» օրաթերթի հինգշաբթի օրւայ 18 օգոստոս 2011-ի թւում «ստացւած գրութիւն» վերտառութեամբ գրութիւնը իր մէջ բովանդակում է սխալ բացատրութիւններ:

Նախ Վարդավառի տօնը, որը Քրիստոսի Այլակերպութեան տօնն է մեր եկեղեցու հինգ տաղաւարներից է եւ մեծ շուքով է տօնուում եկեղեցում: Տօնին կապւած, աշխարհիկ սովորութիւնները բացարձակապէս տօնին էութեան հետ կապ չունեն: Սակայն հարցը այս չէ: Հարցը այն է, որ մեր երիտասարդութեան եկեղեցական արարողութեան ընթացքին միմեանց վրայ ջուր թափելու եղանակն է: Եկեղեցական իշխանութիւնը եկեղեցական արարողութիւնների կատարման ընթացքին արգելեցին իրար վրայ ջուր թափելու սովորութիւնը, քանի որ այդ կատարում է աղմկալից եւ շատ անպատշաճ ձեռով եւ խանգարում էր կրօնական արարողութիւնը, երբ այդ էլ օգուտ չարեց այն ատեն եկեղեցական իշխանութիւնը ստիպեց ընդհանրապէս եկեղեցու շրջափակում միմեանց վրայ ջուր թափելը արգելել: Եղածը այս է:

Յետաքրքրականն ու ցաւալին այն է որ ոչ ոք, ոչ այսպէս ասած սրտցաւ եւ կամ էլ եկեղեցիով էապէս հետաքրքրուող մէկը չմտեցաւ եկեղեցական իշխանութեան եղածին դարման գտնելու համար. միայն սկսեց տարածել այն թէ Սրբազանը արգելել է իրար վրայ ջուր թափելը, որը չի համապատասխանում ճշմարտութեան:

Իսկ այս տարւայ Վարդավառի օրւան եղածը հիմնովին սխալ է ներկայացնել: Ս. պատարագից յետոյ դահլիճում էին դպրաց դասն ու եկեղեցական խորհրդի անդամները: Աւեց որ երիտասարդութիւնը եկեղեցու կից փարջում ջրախաղ են անում: Առաջնորդ Սրբազանը դռան պահակ Պրն. Վահանին թելադրեց որ նրանց մօտ գնայ որ եկեղեցի բերի դրանց, Պրն. Վահանը գնաց եւ եկաւ ու ասաց որ նրանք արդէն խառնել էին տեղացի երիտասարդների հետ եւ հետեւաբար դժւար էր նրանց ներս հրաւիրել:

Պատահում է այն, որ այդ միջոցին տեղւոյն ոստիկանապետը այդ տեղից անցնելիս տեսնում է այս խումբին եւ լուր տալիս է խաղաղապահ ոստիկաններին որ գան եւ կացութեան տէր կանգնեն: Շուրջ տասը մեր երիտասարդներից ձերբակալուում են: Նոյն ժամին Առաջնորդ Սրբազանը հանդիպում է ունենում 107 եւ 105 ոստիկանապետների հետ եւ բացատրութիւններ է տալիս նրանց ասելով, որ մեր այս տօնին նախ եկեղեցական արարողութիւն ենք կատարում եւ դրանից յետոյ միմեանց վրայ ջուր ենք թափում, մեր երիտասարդները մի քիչ անհամբեր, երիտասարդական խանդավառութեամբ բակից դուրս կողքի փարջում սկսել են միմեանց վրայ ջուր

թափել. այդ միջոցին էլ կարգապահական ուժերը եկել եւ ձերբակալել են նրանց: 107 շրջանի ոստիկանապետը անմիջապէս կապ է պահում պատասխանատուների հետ, բացատրում եղելութիւնը եւ ապա վստահեցնում է առաջնորդ Սրբազանին, որ հարցը լուծւած է եւ շուտով նրանց ազատ կարծակեն եւ իրօք ազատ են արձակուում միայն իրենց անձնաթղթերը պահում են: Յաջորդ օրը ձերբակալւած եւ ազատ արձակւած երիտասարդների ծնողները Առաջնորդարան են եկել դիմել դիւանապետութեան եւ Առաջնորդ Սրբազան Հօր թելադրութեամբ իրենց նամակ է տրւել լուսաբանիչ բացատրութիւններով եւ նրանք նամակը տարին ներկայացնելու առ որ անկ է:

Այսքան պարզ եւ յստակ է եղել ամէն ինչ: Ոչ ազգային իշխանութեան եւ ոչ էլ խորհրդարանում Թեմիանի եւ Հիւսիսային Իրանահայութեան Պատգամաւոր Պրն. Գեորգ Վարդանեանի բարեխօսութեան կարիք է եղել:

Չարմանալին այն է, որ դժբախտաբար մամուլը այս քանիբերորդ անգամն է իրեն դրկւած եւ կամ «պղտոր ջրում ձուկ որսացող» գրութիւնները տպում է առանց ստուգելու եւ կամ պատկան մարմինների կողմից լուսաբանութիւն եւ բացատրութիւն ուզելու:

Ժողովուրդը ակնկալում է իր մամուլից առաւել զգօնութիւն եւ իմաստուն լրատութիւն:

Թ.Հ.Թ. ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻԿԱՆ

«Ալիք»-ին, «Արաքս»-ին, «Յոյս»-ին, «Լոյս»-ին եւ «Հայելի» կայքէջին.

23 օգոստոս 2011
Թեմիան
/ԺԽ

Հայաստան

Հայաստանի արտահանումն աճել է 33,8%

News.am. 8-8-2011- 2011թ. առաջին կիսամյակում Հայաստանի արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 33,8%, իսկ ներմուծումն աճել է 10,1%: Սակայն ներմուծումը 3,23 անգամ գերազանցում է արտահանումը: Բացասական սալդոն նույնիսկ աճել է՝ \$1,30 միլիարդից մինչև \$1,33 միլիարդ: ՀՀ Պետեկամուտների կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն արտահանման բարձր ցուցանիշն ապահովել է պղնձի հանքանյութի եւ խտանյութի արտահանման 34,7% աճը: Ընդհանուր արտահանման մեջ պղնձի հանքանյութի եւ խտանյութի տեսակարար կշիռը հասել է 21,8%-ի: Երկրորդ տեղում «չռաֆինացված պղինձ, էլեկտրոլիտիկ ռաֆինացման պղնձե անոդներ» կետն է. արտահանման աճը կազմել է 39,4%, իսկ ընդհանուր արտահանման մեջ մասնաբաժինը հասել է 10,0%-ի: Երրորդ տեղում ոգելից խմիչքներն են՝ հիմնականում, կոնյակ եւ խաղողի գինի: Արտահանումն աճել է 34,9%, իսկ ընդհանուր արտահանման մեջ մասնաբաժինը հասել է 7,7%-ի: Ընդամենը 10 ապրանքային խմբերն ապահովել են արտահանման 78,9%-ը, ինչը խնդրահարույց է: Ներմուծման մեջ 10 ապրանքային խմբերն ապահովել են միայն 38,5%-ը: Ներմուծման խոշորագույն խումբը «բնական եւ հեղուկ գազն է»: Դրա ներմուծումն ավելացել է 16,6%: Բնական գազի 1/3-րդը սպառվում է տնային տնտեսություններում: Երկրորդ տեղում են նավթամթերքները, հիմնականում, բենզին եւ դիզվառելիք, որոնց մասնաբաժինը ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հասել է ներմուծման 8,5%-ի: Այսպիսով, Հայաստանի ներմուծման մոտ 25%-ը կազմում են Էներգակիրները, ինչը մեծացնում է Հայաստանի արտաքին առեւտրի դիսբալանսը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՆՈՐ ՓԱՌԱՅԵՂ ՆԿԱՃՈՒՄԸ



Հայաստանի հավաքականն աշխարհի չեմպիոն

Հայկական շախմատի տարեգրությունում մի նոր փայլուն էջ ավելացավ: Գերագանց հանդես գալով Չինաստանի Նիևրո քաղաքում անցկացված շախմատի աշխարհի թիմային 8-րդ առաջնությունում, Հայաստանի հավաքականն իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց մոլորակի ուժեղագույն թիմի տիտղոսը: Շախմատային օլիմպիադաների կրկնակի չեմպիոն Հայաստանի հավաքականի անդամներ Լեւոն Արոնյանը, Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանն ու Ռոբերտ Յովհաննիսյանը մարզչական գործունեության մեծ փորձ ունեցող Արշակ Պետրոսյանի գլխավորությամբ մեկ անգամ եւս հաստատեցին հայկական շախմատի բարձր վարկանիշն աշխարհում, մրցախաղերի ընթացքում դրսևորեցին իրենց վարպետությունն ու միասնականությունը եւ արժանիորեն նվաճեցին աշխարհի թիմային առաջնության հաղթողի կոչումը: Նախորդ մրցաշրջանում մեր շախմատիստները մի փոքր զիջել էին առաջատարի դիրքերը, սակայն կրկին համախմբեցին իրենց ուժերն ու հայտնվեցին արժանի բարձունքին:

**«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԴՈՐՁԱՆ ԿԱՍՈՒՐՋ՝ ՄԻԱԿՈՐԵԼՈՎ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ»
Նման համոզմունք հայտնեց
ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը**

Օգոստոսի 14-21-ը երեւանում անցկացված Համահայկական 5-րդ խաղերն անցան պատմության գիրկը: «Միասնություն՝ սպորտով» նշանաբանով անցկացված խաղերին մասնակցեցին 125 քաղաքների 3240 մարզիկներ, որոնք 10 մարզածեւերում պայքար մղեցին Համահայկական 5-րդ խաղերի մեդալների ու մրցանակների համար:

Խաղերի վերջին ակորդը հնչեց Ազատության հրապարակում, որտեղ տեղի ունեցավ փակման հանդիսավոր արարողությունը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ: Նա հատուկ մրցանակներ հանձնեց 5 անվանակարգերում հաղթածներին: Համահայկական 5-րդ խաղերի լավագույն մարզական պատվիրակությունն ճանաչվեց Բուենոս Այրեսը: «Արդարացի խաղի համար» մրցանակը հանձնվեց Ուրմիային (Իրան): «Մարզական ոգի եւ համբերություն» մրցանակին արժանացավ ՌԴ Չալդիրի պատվիրակությունը, իսկ «Համահայկական 5-րդ խաղերի հայտնություն» ճանաչվեց պատմական Սասունի թիմը:

Խաղերի ընթացքում անցկացվեց նաեւ գեղեցկության մրցույթ, որին մասնակցեցին 22

մարզուհիներ: Համահայկական 5-րդ խաղերի գեղեցկուհու համար սահմանված մրցանակը Սերժ Սարգսյանը հանձնեց Երուսաղեմի ներկայացուցիչ Զրիստինե Նաջարյանին:

Այնուհետեւ հանրապետության նախագահը ողջույնի խոսքով դիմեց հանդիսության մասնակիցներին, մասնավորապես նշելով. «Շնորհավորում եմ բոլորիս այս հիասքանչ միջոցառումը բարձր մակարդակով կազմակերպելու ու անցկացնելու համար: Շնորհավորում եմ բոլոր հաղթողներին, բայց վստահ եմ, որ պարտվողներ չեն եղել, որովհետեւ բոլորս հավաքվել ենք քաղաքամայր Երեւանում, որպեսզի նախ մրցենք, նաեւ նոր ծանոթներ ու ընկերներ ձեռք բերենք: Ապրելով աշխարհի տարբեր ծայրերում, տարբեր բնակավայրերում, մենք ունենք մեկ հզոր ընդհանրություն՝ բոլորս հայ ենք:

Համահայկական խաղերը նորից միավորեցին Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի մեր բազմահազար հայրենակիցներին, նրանց նորանոր ծանոթություններ, բարեկամություն, մարզական հետաքրքրական մրցումներ պարգեւեցին: Համահայկական խաղերը դարձան կամուրջ՝ միավորելով հայությանը: Բոլորիդ բարի ճանապարհ եմ մաղթում, ցանկանում եմ, որպեսզի ձեզ հետ տանեք հայրենիքի ջերմությունից մի պատահ եւ միևչեւ հաջորդ անգամ Հայաստան գալն այս օրերի հիշողությունները պահպանեք: Ու միշտ վստահ եղեք, որ ձեզանից յուրաքանչյուրը մեզ համար ցանկալի անձ է: Ցանկանում եմ նաեւ, որ դուք Հայաստան գաք ոչ միայն Համահայկական խաղերի առիթով, այլ ցանկացած հնարավորությունը օգտագործեք դա անելու»:

Այնուհետեւ ՀՀ նախագահը Համահայկական 5-րդ խաղերը հայտարարեց փակված, որից հետո խաղերի ջահը մարվեց: Իսկ երեկոն ավարտվեց ճոխ համերգային ծրագրով, որին մասնակցեցին նաեւ սփյուռքահայ կատարողներ:

Արեւմտյան Հայաստան

Արարատի ստորոտին՝ հզոր պայթյուն

Իրանից Թուրքիա ձգվող գազատարի՝ Արարատ լեռան ստորոտով անցնող հատվածում հզոր պայթյուն է տեղի ունեցել: Այս մասին տեղեկացնում է թուրքական «Դոդան» գործակալությունը:

Ուժեղ պայթյունին հետևել է հրդեհը: Կրակի բարձրությունը կազմել է 60 մետր: Կրակը երևացել է Իզդիրում և Կանում: Պայթյունը տեղի է ունեցել տեղական ժամանակով 23:00-ին (հայաստանյան ժամանակով 01:00-ին): Պայթյունի պատճառները դեռ հայտնի չեն: Դեպքի վայրում մեծ թվով հրշեջներ են աշխատել:

HayNews.am

Թուրքաբնակ հայուհին ողջ կյանքը տղամարդ է ձեռագել՝ ոտնձգություններից պաշտպանվելու համար

News.am. 7-8-2011- Թուրքաբնակ հայուհի Սոնա Պոլատը ողջ կյանքը տղամարդ է ձեռագել՝ պաշտպանվելու համար գյուղի հարեւանների ոտնձգություններից:

ինչպես հաղորդում է Nouvelles d'Armenie-ին, 1931թ. Կարսի շրջանի Տելեկ գյուղում ծնված Սոնան 28 տարեկանում հեռացել է ամուսնուց, որը նրան ծեծի ու բռնության է ենթարկել: Մալով միայնակ, Սոնան տեղափոխվել է Էրզրում, եւ, տղամարդկանց ոտնձգություններից խուսափելու համար, ինքն է տղամարդ ձեռացել: Նա միշտ կարճ սակրվածք է ունեցել ու տղամարդու հագուստ է կրել: Սոնա Պոլատի անհետացումը վերջերս բացահայտել է թուրքական CNN Turk հեռուստաալիքը:

Թուրքական թերթ. «Արարատը տանք հայերին»

Panorama.am. 8-8-2011- Թուրքիայի «Taraf» թերթի հոդվածագիր Սերդար Զայան «Արարատը տանք ... » վերտառությամբ հոդվածում անդրադարձել է հայության համար Մասիս սարի բացառիկ կարևոր և սուրբ նշանակությանը:

Զայան ընդգծում է, որ Արարատն առանցքային դեր ունի հայոց պատմամշակութային ինքնության մեջ: Նա նույնիսկ նշում է, որ Արարատն իր ողջ պերճաշուքությամբ երևում է միայն հայկական կողմից, ոչ Թուրքիայից: Եվ այդ ամենի գիտակցման կարողությամբ էլ, ըստ թուրք հոդվածագրի, պարզ է դառնում, որ հայության համար կորուսյալ Արարատը վերադարձնելը տարբերվում է զուտ տարածքային ընդլայնման պարզ քաղաքական միտումից: «Աղը լեռը (թուրքերն այդպես են անվանում Արարատը) հայերի համար շատ կարևոր է, իսկ մեզ համար մյուս լեռներից չի տարբերվում: Ու ի՞նչ կլինի, եթե ցամաքային նույնաչափ տարածքով այն փոխանակենք հայերի հետ՝ այդպիսով խաղաղության ճանապարհին մի մեծ քայլ կատարելով», - հարց է բարձրացնում հոդվածի հեղինակը, որն ուղղել է իր զրուցակցին: Կեղքիս լրջորեն անհանգստացել է այդ առաջարկից և անիրագործելի համարել, քանի որ Արարատը ռազմավարական կարևորություն ունի:

Սերդար Զայան համառել է և կրկնել հարցը՝ այս անգամ, նշելով, որ ավելի մեծ հողատարածքի դիմաց Արարատը հանձնվի հայերին: Զայայի բնութագրմամբ՝ «Չրուցակիցն այլ փաստարկ չկարողանալով գտնել՝ ուղղակի դասական պատասխան է տվել, թե չի կարելի նման բան անգամ մտածել, քանի որ հայրենի հողը սուրբ է»: Այս օրինակով թուրք հոդվածագիրը նկատել է տալիս, որ մտածելակերպի փոփոխության անհրաժեշտություն կա, այլապես խաղաղության ճանապարհը անհասանելի կմնա՝ հիշեցնելով Ալբերտ Էյնշտեյնի հետևյալ միտքը. «Ինդիքները չեն կարող լուծվել մտածողության այն մակարդակում, որում դրանք ստեղծվել են»:

Թուրքիայում «հայերի գանձերը» որոնողների ստիպում են թույլտվություն ստանալ

News.am. 12-8-2011- Կարսի թանգարանի տնօրեն Նեջմեթին Ալփը կրկին զգուշացրել է քաղաքացիներին, որ առանց թույլտվության գանձեր որոնողները կկանգնեն դատարանի առաջ:

Թուրքական KHA գործակալության փոխանցմամբ՝ Կարսի թանգարանի տնօրենը շեշտել է, որ գանձեր գտնելու համար անօրինական կերպով տարբեր վայրերում փոս փորողներն իրենց արարքով լուրջ խնդիրներ են ստեղծում հասարակության եւ միջավայրի համար: Նեջմեթին Ալփը պնդել է, թե գանձ փնտրողները պետք է թույլտվության համար իրենց դիմեն, որից հետո կուսումնասիրվի

տեղանքը եւ որոշում կկայացվի: «Անօրինական կերպով փոս փորողները կկանգնեն դատարանի առաջ: Դրանից խուսափելու համար խորհուրդ էմ տալիս ստանալ օրինական թույլտվություն», - ասել է Կարսի թանգարանի տնօրենը: Նշենք, որ ամբողջ Թուրքիայի տարածքում, որտեղ որ ապրել են հայերը, գանձ փնտրելու տենդ է: Տեղի բնակիչները առիթը բաց չեն թողնում իրենց պատմական հայրենիքը մեկնած հայերից հետաքրքրվելու «թաքցրած գանձերով»՝ դրանք կիսվելու առաջարկ անելով նրանց: Գանձերի մուլուցքով տառապողներն իրականացնում են սրբապղծություն՝ քանդելով հայերի գերեզմաններն ու եկեղեցիների հիմքերը:

Թուրքիայում հայերը ուխտ են կատարել Սասնա Մարութա սարում



News.am. 1-8-2011- Ներկայումս Թուրքիայի տարածքում գտնվող հայկական Սասունի Մարութա սարի գագաթին գտնվող մատուռում մի խումբ հայեր իրականացրել են իրենց ավանդական ուխտը:

Թուրքական Batman Postasi կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի Բաթման նահանգում գտնվող Սասունի քաղաքապետարանի եւ քայմաքամի կողմից կազմակերպած վերելքը դեպի Մարութա լեռ սկսվել է հուլիսի 31-ին ժամը 4:00-ին: Վերելքին մասնակցել են աշխարհի տարբեր վայրերից ժամանած սասունցի հայեր, որոնց պապերը փրկվել են Հայոց ցեղասպանությունից, տեղի բնակիչներ եւ մի խումբ թուրք լեռնագնացներ: Գագաթ հասնելուն պես, հայերը մտել են մատուռը, մոմ վառել եւ աղոթք արել: Կրոնական արարողության համար Ստամբուլից Սասուն եկած հայ հոգեւորական Ջեզո Յուբսելը նշել է, թե իրենք ցանկանում են, որ տեղի իշխանությունները վերանորոգեն փլուզման վտանգի տակ գտնվող եկեղեցին:

Դեպի Մարութա լեռ վերելքին մասնակցել է նաեւ իշխող «Ադդարություն եւ զարգացում» կուսակցության Բաթմանից ընտրված պատգամավոր Չիվեր Օզդեմիրը: Նշենք, որ Մարութա սարը գտնվում է Արեւմտյան Հայաստանի Սասուն գավառում եւ եղել է սասունցիների սիրած եւ պաշտելի սարը, որը կոչվել է նաեւ Մարաթուկ:

Թուրքիայում հայերի նոր սերունդն առավել վստահ է բացահայտում իր ինքնությունը

Tert.am. 8-8-2011- Թուրքիայի Դերսիմ նահանգում ում հուլիսի 27-31-ը անցկացված «Մնծուրի՝ բնության և պաշտամունքի» փառատոնն ու հայաստանյան «Մարաթուկ» համույթի ելույթը հայ ինքնությունն արթնացնելու նպատակ ունեին այն մարդկանց մեջ, ում ծնողները կամ պապերը ստիպողաբար կրոնափոխ եղած հայեր են, որ ապրում են՝ որպես զազա: Այսօր լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի» ղեկավար Հայկազուն Ավլըրցյանը: «Որքան ուզում է գրքեր

գրենք, քարոզչություն անենք, սակայն նման մի այցելությունը, համերգաշարը շատ ավելի մեծ աշխատանք է կատարում նրանց ինքնությունը բացահայտելու, նրանց մեջ կարծրատիպերը կոտրելու առումով,- Լեւոն Նա: Բանախոսը Լեւոն, որ հայկական ազգագրական երգերն ու պարերը, մշակութային այլ արժեքներ զագայական և քրդական մշակույթների հետ այնքան նմանություններ ունեն, որ դժվար է հստակ սահմանագծեր դնել, թե որն է ճշգրիտ հայկական, որը՝ զագայական, և դրա պատճառներից մեկն էլ, ըստ Ավլորոյանի, այն է, որ զագաների մեծ մասը հիմա հայեր են: «Մենք ունենք շատ ընդհանրություններ ոչ միայն մշակութային, այլև՝ վարվեցողական նույնություններ: Եվ սա փաստ է, որ մենք պահպանում ենք մեր մշակութային արժեքները, դժվար ենք փոխում մեր ազգային դիմագծերը»,- ասաց Նա: Ըստ Ավլորոյանի՝ նոր սերունդը վստահ բացահայտում է իր ինքնությունը, միևնույն ժամանակ սերունդը դեռ վախենում է խոսել իր հայկական արմատների մասին: «Մի կին կար, ում ամբողջ ընտանիքն ասում էր, որ հայ է, միայն ինքը պնդում էր, թե զագա է,- պատմեց Ավլորոյանը,- ասում էին՝ այ մայրիկ, ոնց կարող է՝ թո հայրն ու մայրը հայ են եղել, դու՛ չէ: Ասում էր՝ չէ ու չէ, ես հայ չեմ. վախենում էր խոսել իր հայ ինքնության մասին»:

Թուրքիայում վերաբացվեց Քառասուն մանկանց հայկական եկեղեցին

Tert.am. 8-8-2011- Թուրքիայում 9-ամյա դադարից հետո վերաբացվել է Քառասուն մանկանց հայկական եկեղեցին: Ինչպես տեղեկացնում է թուրքական «Անադոլու» գործակալությունը, Հաթայ նահանգի Իսթենդերուն շրջանում 1872թ. կառուցված եկեղեցում պատարագ է մատուցվել Ավետիս քահանա Թաբաշյանի ձեռամբ: Ընդգծելով, որ Թուրքիայի հայ համայնքը շատ երջանիկ է եկեղեցու վերաբացման կապակցությամբ, քահանա Թաբաշյանն ասել է. «Մենք Թուրքիայում ապրում ենք խաղաղության և հանդուրժողականության մթնոլորտում»: Վերջին անգամ Քառասուն մանկանց եկեղեցում պատարագ էր մատուցվել քահանա Սարգիս Սերոբ Բիլյանի կողմից 2002թ.: Քահանայի մահից հետո եկեղեցին չի գործել:

Ստիպողաբար կրոնափոխ եղած հայությունը ներքուստ պահպանում է հայի ինքնությունը. Հայկազուն Ավլորոյան

Tert.am. 8-8-2011- Հուլիսի 27-31-ը Արևմտահայաստանի Դերսիմ նահանգի տարբեր քաղաքներում տեղի է ունեցել «Մնծուրի՝ բնության և պաշտամունքի» փառատոնը, որի շրջանակում համերգաշարով Դերսիմում շրջել է «Մարաթուկ» համույթը, բանահավաքչական-նկարահանման աշխատանքներ են կատարել 10-ից ավելի մտավորականներ: Այսօրվա ասուլիսին այս մասին հայտնեց Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի ղեկավար Հայկազուն Ավլորոյանը: Ըստ Ավլորոյանի՝ փառատոնն արդեն 13-րդ տարին է, որ հյուրընկալվում է Դերսիմում, որից առաջին երկուսը՝ ոչ պաշտոնական, վերջին 11-ը՝ պաշտոնական հրավերով: «Սա մի բացառիկ միջոցառում է, որ մեր մշակույթը տանում-հասցնում է մեր հայության ամենահեռավոր անկյուններից մեկը՝ Արևմտահայաստանի խորքերը: Սա արտառոց մի փաստ է»,- ասաց Նա: Ավլորոյանը հաղորդեց, որ հայության մի ահռելի զանգված՝ ստիպողաբար կրոնափոխ եղած, բուրդի և ալևինների պիտակով ապրում է այստեղ, սակայն ներքուստ

պահպանում է հայի իր ինքնությունը: «Այս փառատոնը ևս մի անգամ մեզ համոզեց, որ այնտեղ մեծ քանակով հայեր կան: Նրանցից շատերը մոտեցան մեզ, պատմեցին իրենց պատմությունները՝ զարհուրելի, ողբերգական, հուզիչ պատմություններ»,- Լեւոն Նա: Ըստ նրա՝ այս փառատոնը ոչ միայն իրենց՝ Արևմտահայաստանի ծայտյալ հայերի համար է կարևոր, այլև՝ Հայաստանի հայերի, «քանի որ մենք էլ պիտի հասկանանք, թե ինչ ունենք և իրենք ինչ ունեն, ինչ պիտի տանք իրենց, և իրենց պահպանած մշակութային բեկորներից ինչը վերցնենք»:

Վանա լճում հայտնաբերվել է 7,5 միլիարդ դոլարի ուրանի հանք

Tert.am. 8-8-2011- Վանա լճի ընդերքում հայտնաբերվել է 7,5 միլիարդ դոլար ընդահուր արժողությամբ ուրանի հանք:

Ինչպես գրում է թուրքական «Սաբահ» օրաթերթը, հանքը հայտնաբերվել է թուրք գիտնականների կողմից Վանա լճի ջրի մաքրության հետազոտման աշխատանքների ընթացքում:

Թուրքիայի «Ֆըրաթ» համալսարանից քիմիայի պրոֆեսոր Մեհմեդ Յամանն իր խմբի հետ միասին 3 տարի շարունակ հետազոտություններ է իրականացրել Վանա լճում: Իսկ անցած ամիս թուրք պրոֆեսորը հորված է հրապարակել Clean-Journal ամսագրում, որում նշել է Վանա լճի ջրերում ուրանի առկայության մասին: «Սաբահը» գրում է, որ այդ հանքն իսկական հարստություն է Թուրքիայի համար, որը պատրաստվում է ատոմակայաններ կառուցել:

Միջազգային

103 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՎԵՐԺԻՆԵ ՄԱՉՄԱՆՅԱՆԸ

Երկարատեւ հիվանդությունից հետո Լեքսինգտոն առողջապահական կենտրոնում (Առլինգտոն, Մասաչուսեթս) վախճանվել է Եղեռնից մազապուրծ, բռնագաղթի փորձություններով անցած, բայց միշտ իր եռանդն ու ոգեշնչումը պահպանած Վերժինե Մազմանյանը: «Միտոս սփեքթեյթ» շաբաթաթերթի հունիսի 25-ի համարի փոխանցմամբ Վերժինեն ծնվել էր Ամասիայում (պատմական Հայաստան) 1908-ին: Կոտորածներից հետո Դեր Չորի հրդեհված հորերից մեկից փախչելով ապաստան է գտել «Խրիմյան Հայրիկ» որբանոցում, որտեղ վերագտել է քրոջը՝ Գլադիսին:

Հետագայում Ամսարյան ընտանիքի միջոցներով տեղափոխվել են Մ. Նահանգներ: Վերժինեն ՌԱ կուսակցության սյուններից էր եւ ամուսնուն՝ Գրիգոր Մազմանյանի հետ Մոնրեալի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գլխավոր նվիրատուն:

Թուրք և բուրդ երիտասարդներն արտասվում ու ներողություն էին խնդրում պատճառած «ցավի» համար

Հուլիսի 27-ին, պատմության մեջ առաջին Անկարա-Երևան ուղիղ թռիչքից ժամեր առաջ մոտ 20 հոգով այցելեցինք Ծիծեռնակաբերդ: Բացի թուրքերից, խմբի կազմում կային նաև հայեր, ամերիկացիներ, ինչպես նաև Թուրքիան ներկայացնող պատվիրակության կազմի մեջ եղող քրդերը: Ժամը 11:00-ին, երբ մշտապես իր դռներն է բացում

թանգարանը, մենք եղանք այդ օրվա առաջին այցելուները: Մեզ ուղեկցողը կարգեցին, ով էլ սկսեց ամերիկացիների համար սահմանեցուցիչ, հայերի համար խիստ ցածր ու կատաղություն, իսկ թուրքերի համար դժվարանում են ասել, թե ինչ զգացողություն առաջացնող պատմությունները:

Թուրքերից ու քրդերից ոմանց դեմքին նկատելի էր վախ, ապշահարություն, նույնիսկ արցունքներ: Բոլորն ազահաբար նկարում էին թանգարանում գտնվող ամեն ինչ մինչև վերջին մանրուքները: Թանգարանի ցուցասրահում պտույտ գործելուց հետո մոտեցանք տպավորությունների գրքին:

Առաջին գրառումը կատարեց թուրք երիտասարդներից մեկը: Թուրքերենով ներողություն էր խնդրում «պատճառաւոր ցավի համար»: Դրան հետևեց մեկ այլ թուրք երիտասարդի գրությունը, ով նույնպես ներողություն էր խնդրում «մեծ ցավի» համար: Երրորդ գրառման ժամանակ, երբ արդեն մատյանի առջև նստած էր ամերիկացի երիտասարդը, ինձ մոտեցավ Թուրքիայի պատվիրակության կազմից մի քուրդ աղջիկ և լացելով ներողություն խնդրեց: Այդ պահին ոչինչ չկարողացա ասել:

Քիչ այն կողմ կանգնած թուրք երիտասարդը նույնպես լացում էր: Այդ ընթացքում մատյանին մոտեցավ մեկ այլ քուրդ աղջիկ, ով նույնպես գրավոր ներողություն գրեց: Թուրքիայի ներկայացուցիչների մյուս մասն ակտիվորեն գնում էր Ցեղասպանության վերաբերյալ գրականությունը, որը վաճառվում էր թանգարանի ներսում գտնվող փոքրիկ տաղավարում:

Թանգարանից դուրս գալով՝ ուղևորվեցինք անմար կրակի մոտ: Ճանապարհին քար լռություն էր: Լռություն էր նաև կրակի մոտ: Ցավոք, ճանապարհին չէինք կարողացել ծաղիկներ գտնել: Այնուամենայնիվ, այդ լռության մեջ թողեցինք անմար կրակը և նույն ճանապարհով հետ վերադարձանք:

Եվ...մոռացա նշել, որ այս այցը հենց թուրքերի նախածեռնությունն էր, նրանք էին ինձ խնդրել իրենց տանել Շիծեռնակաբերդ:

HayNews.am

Գևորգ Պետրոսյան, թուրքագետ

ՎԵՐԱՂՈՐԶՆԵԼ ՈՉ ՄԻԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ, ԱՅԼԵՎ ԶԵՆԱԳՐԵՐԸ, ՍՐԲՎՊԱՏԿԵՐՆԵՐԸ...



Միացյալ Նահանգների ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հուլիսի 20-ին 43 կողմ և 1 դեմ քվեարկությամբ հաստատել է Բերման-Սիսիլյունի ներկայացրած 2583 օրենսդրական փոփոխությունը, որի համաձայն 2012 թ. ֆինանսական տարում Թուրքիան պետք է երաշխավորի իր քրիստոնեական ժառանգության պահպանումը:

Ինչպես տեղեկացնում է Ամերիկայի հայկական համագումարը, 306 բանաձեռում ներկայացված այս փոփոխությամբ Թուրքիայի կառավարությանը ԱՄՆ-ը կոչ է անում կատարել միջազգային պայմանագրերով եւ մարդու իրավունքների միջազգային իրավունքով

ԼՈՒՅՍ # 165

ստանձնած իր պարտավորությունները՝ «վերջ դնելու կրոնական խտրականության բոլոր ձեւերին, թույլ տալ քրիստոնեական եկեղեցական ունեցվածքի իրական սեփականատերերին առանց խոչընդոտների կամ արգելքի կազմակերպել եւ իրականացնել ծիսական արարողություններ, կրոնական կրթություն, հավաքներ, սոցիալական ծառայություններ եւ կրոնական այլ գործողություններ»:

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած լրացմամբ Թուրքիային կոչ է արվում նաեւ իրենց իրական տերերին վերադարձնել քրիստոնեական եկեղեցիները եւ այլ սրբավայրերը, մենաստանները, դպրոցները, հիվանդանոցները, կրոնական այլ ունեցվածքը, ներառյալ շարժական ունեցվածքը, ինչպիսին են ձեռագրերը, սրբապատկերները, ծիսական սպասքը:

Եվս մեկ կետով Թուրքիայից պահանջվում է քրիստոնեական եկեղեցիներին եւ նրանց սեփականատերերին թույլատրել առանց արգելքի կամ խոչընդոտի վերանորոգել, վերականգնել իր ունեցվածքը:

Ամերիկայի հայկական, հունական եւ ասորական համայնքները ողջունել են այս փոփոխության ընդունումը, որ կարող է հիմք դառնալ Թուրքիայում քրիստոնեական ժառանգության պահպանման ու պաշտպանության համար, ընդ որում, այդուհետեւ նորոգվող դրեւ եկեղեցի չպետք է դառնա թանգարան՝ անհնար դարձնելով այդ եկեղեցիներում աղոթք բարձրածայնելու ցանկությունը:

Բաբլի և Թեհրանի միջև հարաբերությունները ծայրաստիճան լարված են

HayNews.am. 12-8-2011- Բաբլուն բողոքի նոտա է ուղղել Թեհրանին՝ կապված Իրանի գինված ուժերի գլխավոր շտաբի հրամանատար, գեներալ Սեյդան Հասան Ֆիրուզբադիի հնչեցրած հայտարարությունների հետ: Բողոքի նոտան երեկ հանձնվել է Ադրբեջանում Իրանի դեսպանին:

Նշենք, որ վերջերս Ֆիրուզբադին իրանական լրատվամիջոցներում հնչեցրել էր հայտարարություններ, որոնք Բաբլուն դիտարկում է որպես հակաադրբեջանական: Մասնավորապես, նա նշել էր, որ Ադրբեջանը հանդիսանում է «Արան» է, և Ադրբեջանի ժողովուրդն «արանական է ու նրանց երակներով հոսում է իրանական արյուն»:

Ռազմական փորձագետ.

Իրանը նախագուշացնում է Ադրբեջանին

News.am. 16-8-2011- Տարածաշրջանային զարգացումների կոնտեքստում Իրանի վերջին հայտարարություններն ու քայլերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ հարցազրույցում ասաց ռազմական փորձագետ Արծրուն Յովհաննիսյանը՝ կարեւորելով հատկապես Իրանի ՉՈւ Գլխավոր շտաբի պետ Հասան Ֆիրուզբադի այն հայտարարությունը, որով նա նախագուշացրել էր Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին չճշել Ադրբեջանում իսլամական «գարթոնքը», հակառակ դեպքում «Ալիևին դաժան ճակատագիր կսպասի»: «Չինվորականները հենց այնպես, ոչինչ չեն հայտարարում, մանավանդ Իրանում», - ասաց Յովհաննիսյանը՝ նշելով, որ

Իրանը պարբերաբար հիշեցնում է Բաբելին, որ վերջինս իր ազդեցության գոտում է գտնվում, եւ չնայած դեպի Թուրքիա բացահայտ կողմորոշմանը, Իրանը հզոր լծակներ ունի ազդելու Ադրբեջանի վրա: Ըստ փորձագետի՝ Ադրբեջանը, որպես պետություն Թուրքիայի՝ տարածաշրջանում ազդեցության պահպանմանն ուղղված նախագծերից է: Այս պետությունում նույնիսկ ԽՍՀՄ իշխանության տարիներին ազգային փոքրամասնությունների ծուլման եւ թուրքացման քաղաքականություն է վարվել, եւ այսօր բնակչության մեծամասնությունը իրենց ճանաչում են որպես թուրք: Սակայն Ադրբեջանի բնակչության մեծ մասը հիմնականում շիա-մահմեդականներ են, եւ կրոնական գարթոնքի դեպքում Ադրբեջանը Թուրքիայից դեպի Իրան կմիտվի: «Գլխավոր շտաբի պետի այս հայտարարությունը բացահայտ ակնարկ է, որ Իրանը պատրաստ է նաեւ ռազմական միջոցներով պաշտպանել Ադրբեջանում շիա-մահմեդականների իրավունքները»,- ասաց փորձագետը՝ կշռելով, որ Իրանի համար, ի դեմս Ադրբեջանի, հերթական արեւմտամետ մահմեդական պետության անմիջական սահմանակցությունը անցանկալի է, հատկապես որ առկա է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը, որի լուծման մեջ ներառված է խաղաղապահների տեղակայման հարցը, ինչն Իրանը անվտանգության սպառնալիք է համարում: Ուշագրավ է նաեւ Իրանի ՉՈւ ԳՇ պետ Ֆիրուզբաբի հայտարարության պաշտոնական Թեհրանի հերթումը, որ գեներալ-մայոր Ֆիրուզբաբը նման հայտարարություն կատարելով բնավ չի ցանկացել վիրավորել Ադրբեջանի նախագահ Ալիեւին: Դիվանագիտական այս հայտարարության իմաստն այն է, որ Ադրբեջանի իշխանությունը զուր չպետք է վիրավորվի, այլ պետք է հետեւի Իրանի բարձրաստիճան ռազմական գործչի խորհրդին, եւ չխոչընդոտի Ադրբեջանի իսլամականացմանը:

Շասարակական

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԲՈՂՈՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱԼԱՆԻ ՀԵՏ ԱՌՆՉԿԱՑ ՄՈԱՀԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՈՒԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՀԱՄԱՐՀԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ԽԱՆՏՈՒՄ Է ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հասարակական, քաղաքական և այլ մարզերի, իրադարձությունների և խնդիրների տեղեկատվությունն ու լուսաբանումը մամուլի պարտականությունն է, ուստի լրատվության թուն աղբյուրին հասնելու համար նա դիմում է ամենատարբեր կառույցների ներկայացուցիչներին և անձանց: Իսկ վերջիններին, նամանավանդ կառույցների պարտականությունն է, հարգելով հասարակության տեղեկացված լինելու իրավունքը, առանց խտրականություն դնելու մամուլի ներկայացուցիչների միջև, նրանց փոխանցել և տրամադրել իրենց ասելիքը:

Նոր Ջուղայի Մբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից անհայտ պայմաններում հինգ մանրանկարների և երկու յուղանկար կտավների անհետացման և Լոնդոնի աճուրդում դրանց հայտնվելու վերաբերյալ իրանահայ մամուլի կողմից հրապարակված բացահայտման լայնամասշտապ արձագանքը հայաստանյան և սփյուռքյան լրատվամիջոցներում և, փաստորեն, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդին պատասխանատվության առջև դնելուց հետո միայն, նշյալ կառույցը հաստատելով թալանման լուրը, խուսափելով հաղորդագրությամբ հանդես գալ այդ կապակցությամբ: Սակայն ի գարնանս իրանահայ մամուլի, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդը հարցականներով լի իր «լուսաբանման» հայտարարությունը մամուլին հղելու փոխարեն, այն տրամադրեց միմիայն Թեհրանում տպագրվող ՀՅԴ պաշտոնաթերթ «Ալիք»-ին:

Թե ի՛նչն էր, մինչև թալանված իրերի մասին մամուլի հրապարակումներ կատարվեմ, Թեմական խորհրդի քար լռության պատճառը, կամ թե այսօր ի՛նչն է մղում նշյալ խորհրդին, իր հայտարարությունները մամուլին հղելու փոխարեն, միմիայն դաշնակցական օրգանին տրամադրել, պարտավոր են առաջին հերթին պատասխանելու իրենք՝ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի պատասխանատուները:

Մեզ՝ ներքո ստորագրող Իրանահայ մամուլի ներկայացուցիչներին, մնում է հայտարարել, որ հանցագործության քողարկումը, նման ազգային իրերի թալանման նկատմամբ «խորհրդապահ» վերաբերումը՝ փաստորեն թափանցիկ աշխատանքից խուսափելը, նշանակում է մեղապատվություն կատարված հանցագործության մեջ:

Մենք՝ իրանահայ մամուլի ներկայացուցիչներս, հայտարարում ենք, որ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի լրատվամիջոցների նկատմամբ նման ոտնձգությունը, փաստորեն խտրական վերաբերումը ոտնահարում է նախ և առաջ հասարակության տեղեկացվածության իրավունքը, որպես ժողովրդավարական ամենաառաջնային իրավունք: Մենք նման գործունեությունը, ի մասնավորի Սփյուռքյան պայմաններում, որակում ենք քայքայիչ և կործանիչ:

18 հուլիսի 2011թ., Թեհրան
«Իրանահայեր» լրատվական ցանց
«Արաքս» շաբաթաթերթ
«Յոյս» երկշաբաթաթերթ
«Լոյս» ամսագիր

Ովքեր են մասունները Հայաստանում

«Լրագիր» 7-7-2011- Grand Orient De France ֆրանկ-մասունական օթյակի Մեծ Վարպետ Գի Արսիզեն Հայաստան կատարած այցելության առիթով տված ասուլիսում հայտարարել է, որ Հայաստանում կա իրենց օթյակի 15-20 անդամ: Նա ասել է, որ այդ անդամները չեն բացահայտվում, քանի որ Հայաստանում դեռ օթյակ չկա: Արսիզեն կշռել է, որ ինքը Հայաստան է այցելել, որպեսզի այդ օթյակի ձևավորման հարցի հնարավորությունները դիտարկվեն:

Արսիզեն նաեւ կշռել է, որ այցելել է Հայաստան, որպեսզի տեսնի, թե “հոգեւոր զարգացվածությամբ հնագույն” մեր երկրին ինչ օգնություն է հնարավոր ցուցաբերել: Արսիզեն կշռել է, որ իր այցի մասին տեղեկացրել են Հայաստանի նախագահին եւ ստացել նրա հավանությունը: Գի Արսիզեն Հայաստանում կշռել է, որ հարկավոր է այստեղ կոտրել մասունների վերաբերյալ նախապաշարումները: Նա հայտարարել է, որ անգլո-սաքս ֆրանկմասուններն են, որ գործում են գաղտնի, ունեն արարողակարգեր եւ այլն: Իսկ ֆրանկ-մասունները, ըստ նրա, բաց են գործում: Այդուհանդերձ անհասկանալի է, որ եթե բաց են գործում, ապա ինչու չեն բացահայտում Հայաստանի իրենց

անդամներին: Ութեր են այդ 15-20 գործիչները, որոնք ֆրանկ-մասոնական Grand Orient De France օթյակի անդամ են: Գի Արսիզեն Նշել է, որ այդ մարդիկ ֆրանկոֆոններ են եւ Ֆրանսիայի հետ սերտ կապ ունեցող անձնավորություններ:

Հիմա երեւի Հայաստանում փնտրտուք է սկսվել, թե ով է հայտնի մարդկանցից ֆրանկոֆոն եւ ով սերտ կապեր ունի Ֆրանսիայի հետ: Այսինքն, խոսելով Հայաստանում մասոնների հանդեպ կարծրատիպերի եւ նախապաշարումների վերացման անհրաժեշտության մասին, Գի Արսիզեն այդուհանդերձ թերեւս ավելի է նպաստում այդ կարծրատիպերի եւ նախապաշարումների խորացմանը, կասկածների տարածմանը: Ինչպես ՊԱԿ գործակալների հարցում են կասկածներ, թե այսինչը կամ այսինչը գործակալ է, այդպես էլ մասոնների հարցում՝ այսինչը կամ այնինչը մասոն է: Այդ դեպքում ավելի ճիշտ չէ արդյոք, առավել եւս եթե ֆրանկ-մասոնական օթյակը բաց եւ թափանցիկ գործունեության հետեւորդ է, բացահայտ հայտարարի, թե ութեր են Հայաստանի իր անդամները, ութեր են այդ 15-20 մարդը: Թաքնվելը, բողոքվելը ամենեւին չի նպաստում մասոնականության հանդեպ հասարակական նախապաշարումների եւ կարծրատիպերի վերացմանը: Ավելին, տարօրինակ է թվւն ինքը՝ 15-20: Այսինքն, ինչ է նշանակում 15-20: Միթե Մեծ Վարպետը չգիտէ, թե կոնկրետ քանի անդամ ունեն Հայաստանում 15, 16, 17, 18, 19, թե 20: Ինչի համար է այդ դիպազոնը՝ 15-20: Որ Հայաստանում պետք է հաղթահարվի մասոնականության շուրջ ստեղծված կիսաառասպելական, կարծրատիպային նախապաշարումը, թերեւս անկասկած է: Ընդհանրապես, հասարակության մեջ պետք է հաղթահարվեն ցանկացած հարցի վերաբերյալ նախապաշարումներն ու կարծրատիպերը, եւ ամեն ինչ պետք է հնարավորինս մոտեցվի բանական դատողության հիմքով ձեւավորվող կարծիքների մակարդակին: Կոնկրետ մասոնականության մասին կարծրատիպն ու նախապաշարումը հաղթահարելու գործում մասոններն առաջին հերթին հենց իրենք ունեն զգալի անելիք: Եվ այդ առումով իհարկե ողջունելի է Գի Արսիզեի նախաձեռնությունը՝ զալ Հայաստան եւ բացահայտ խոսել ինչ որ բաների մասին: Բայց, Հայաստանի հասարակության մեջ կարծրատիպերն ու նախապաշարումներն այնքան խորն են, որ դրանք փուլ առ փուլ հաղթահարելը, դոգավորված անկեղծությամբ հաղթահարելը թերեւս այդքան էլ հեշտ չէ, ու գուցե անհնար է: Բանն այն է, որ հանրային դիմադրությունն այդ հարցում ունակ է հաղթահարել ցանկացած դոգա: Հետեւաբար պետք է հաղթահարման պրոցես սկսել լայն ալիքով, եւ միայն այդ դեպքում կա հասարակական նախապաշարումների եւ դիմադրությունների ալիքը հաղթահարելու շանս: Ընդ որում, այդպես է ցանկացած այլ ոլորտի կամ թեմայի հարցում՝ կամ միանգամից եւ լայնածավալ գրոհ նախապաշարումների վրա, կամ դրանք խժժելու են փոփոխության ցանկացած դոգա: Թեւեւ, չի բացառված իհարկե, որ մասոններն օրինակ չեն էլ շտապում այդ գործում: Ի վերջո, կարծրատիպերն ու նախապաշարումները հաղթահարելը երեւի թե Հայաստանի հասարակությանն է պետք, ոչ թե մասոններին:

Այդուհանդերձ, որոշակի հարցադրումներ մասոնների Հայաստանի հանդեպ հետաքրքրվածության շուրջ առաջանում են: Մասնավորապես, թե ինչու այդ հետաքրքրությունն այդպես բացահայտ կերպով սկսեց

դրսեւորվել այժմ, երբ Հայաստանը թե ներքին քաղաքական, թե Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցերում բավական բախտորոշ փուլում է, եւ կարող են կայացվել կամ պետք է կայացվեն իսկապես շրջադարձային որոշումներ: Ֆրանկ-մասոնների Մեծ Վարպետը Հայաստանում չի էլ թաքցրել, որ ցանկանում են ներկայիս ծանր ժամանակաշրջանում օգնել Հայաստանին: Դե, ուրեմն երեւի թե կարելի է պատկերացնել, թե իսկապես ինչքան ծանր իրավիճակում է հայտնվել Հայաստանը, որ մասոնները ստիպված են բացահայտ հայտարարել օգնության պատրաստակամության մասին: Միայն թե ամբողջ հարցը հենց այն է, թե արդյոք Նրանք իսկապես լավ են պատկերացում, թե ում են պատրաստվում օգնել, այսինքն ինչ հասարակության, տնտեսական, քաղաքական եւ պետական ինչ համակարգի հետ գործ ունեն: Հ.Գ. Ի դեպ, հետաքրքրական է, որ այցը տեղի է ունենում Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզիի Հայաստան կատարելիք այցի նախաշեմին: Ինչպես հայտնի է, տարվա երկրորդ կեսին Հայաստան է պատրաստվում այցելել Սարկոզին: Իմիջիայլոց, Գի Արսիզեն չի էլ թաքցրել, որ Ֆրանսիայի նախագահները ընտրական շրջանում հաճախ են խորհրդակցում իրենց օթյակի հետ:

ՀԱԿՈՐ ԲԱԴԱԼՅԱՆ

Մշակույթ

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՄԱԲՐԵԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 79-րդ տարում վախճանվեց ականավոր հայագետ-աղբյուրագետ, կովկասագետ, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մամբրեի Մուրադյանը: Պ. Մուրադյանը ծնվել է 1933թ. մարտի 25-ին Ջավախքի Ղադո (հայ. Փապար) գյուղում: 1952 թ. ավարտել է Ազավրեթի միջնակարգ դպրոցը: 1953-58 թթ. սովորել եւ ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արեւելյան (պարսկական) բաժինը: 1960-1962 թթ. սովորել է Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Թբիլիսիի պետական համալսարանում: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» թեմայով: 1963-1970 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հին գրականության բաժնում: 1970 թ. աշխատել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, իսկ 1976

թվականից նաև ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում, որտեղ կազմավորել է գլխավորել է կովկասագիտության եւ բյուզանդագիտության բաժինը: 1986 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Վրաստանի հայերեն արձանագրությունները. Ջարթլի եւ Կախեթ» թեմայով: 1989 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, դարձել է Մետրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր: 1991/92 ուսումնական տարում կովկասագիտության դասընթաց է վարել Գերմանիայում (Տրիրի համալսարան): 2002-2003 թթ. դասավանդել է Հ. Աճառյանի անվան համալսարանում: Պ. Մուրադյանը երկար տարիներ դասավանդելով Երեւանի պետական համալսարանում՝ աճեցրել է բազմաթիվ երիտասարդ մասնագետներ:

Նշանակալի է պրոֆ. Պարույր Մուրադյանի վաստակը հայոց միջնադարյան մատենագրության, մշակույթի, ճարտարապետության, պատմական սկզբնաղբյուրների ու վիմագրական հուշարձանների հիմնարար հետազոտությունների բնագավառում:

Հայագիտության համար խոշոր երեւոյթ էր Պ. Մուրադյանի կողմից «Վրաց ժամանակագրություն»-ը հին վրացերենից հայերենի ամբողջական թարգմանությունն ու հրատարակումը:

Մնայուն եւ գիտական մեծարժեք հետազոտություններ են «Armeno-Georgica» մատենաշարով հրապարակված Պ. Մուրադյանի մենագրությունները՝ Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Վրաստանի հայերեն արձանագրությունները (2 հատոր), Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Շուշանիկի վկայաբանության հայերեն եւ վրացերեն խմբագրությունները:

Պ. Մուրադյանը թողել է գիտական հսկայական ժառանգություն՝ ավելի քան 300 տպագիր աշխատություն:

Նրա ուսումնասիրություններին հատուկ է գիտական հիմնավորվածությունը, առաջադրվող եզրակացությունների թարմությունն ու համարձակությունը, գիտական նորույթը: Պրոֆ. Պ. Մուրադյանի գիտական գործունեությանը բնութագրական է գիտական հետեւողականությունը եւ ուսումնասիրության խնդիրների լայն շրջանակի ընդգրկումը: Նա ծավալել է գիտակազմակերպչական ակտիվ գործունեություն, մեծ վաստակ ունի ինչպես հայագիտական նոր ուսումնասիրությունների ծրագրավորման, նոր կադրերի ստեղծման, այնպես էլ անվանի հայագետ գիտնականների վաստակի գնահատման ու նորովի ներկայացման, հայագիտական նոր հրապարակումների ու շարքերի ստեղծման ու խմբագրման ասպարեզներում:

Նա կազմել ու խմբագրել է «Կովկաս եւ Բյուզանդիա», «Հայագիտական հետազոտություններ», «Հայագիտական մատենադարան», «Հուշարձան» մատենաշարերը, խմբագրել է շատ հայագետների մենագրություններ, կազմել եւ հրատարակել է անվանի հայագետների գիտական ժառանգությունը ամփոփող ժողովածուներ (Ն. Մառ, Հ. Օրբելի, Լ. Խաչիկյան, Լ. Մելիքսեթ-Քեչ, Երվանդ Տեր-Մինասյան, Սկրտիչ Ներսիսյան եւ այլք):

Պրոֆ. Պ. Մուրադյանը եղել է գիտական, գիտամեթոդական ու խմբագրական մի շարք խորհուրդների անդամ: Գիտական զեկուցումներով մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների ու կոնգրեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներում, Հայաստանում կազմակերպել է «Քրիստոնյա Արեւելք» միջազգային գիտաժողովը եւ հրատարակել նրա կյութերը:

Պ. Մուրադյանը բազմիցս արձագանքել է նաեւ պատմության կեղծարարություններին եւ պարբերական

մամուլի ու գիտական հանդեսների էջերում բազմիցս հանդես է եկել սուր գրախոսություններով:

Պատմական գիտությունների դոկտոր, Մետրոպ Մաշտոցի անվան մրցանակի դափնեկիր պրոֆ. Պարույր Մամբրեի Մուրադյանը պատմա-բանասիրական լայն ընդգրկում ունեցող գիտնական էր, որը խոր հետք է թողել Հայաստանում կովկասագիտության ձեւավորման ու զարգացման բնագավառում:

Նա դեռես շատ անելիքներ եւ մեծ ծրագրեր ուներ իրականացնելու:

Պարույր Մուրադյանի՝ անխոնջ գիտնականի եւ բարի մարդու հիշատակը թանկ ու անմոռաց է հայագետների, բազմաթիվ գործընկերների, աշակերտների, ինչպես նաեւ Հայաստանի ողջ մտավորականության համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ ԵՊՀ պատմության ֆակուլտետ

ՀՐԱԶ ՄԻՔԱՅԵԼԻ ԲԱՐԹԻԿՅԱՆ



(1927 - 2011)

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան խոր վշտով հայտնում է, որ 2011 թ. օգոստոսի 17-ին վախճանվել է ականավոր պատմաբան, բյուզանդագետ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Միքայելի Բարթիկյանը, եւ ցավակցում է հանգուցյալի ընտանիքին ու հարազատներին: Ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի քաղաքացիական հոգեհանգիստը տեղի կունենա օգոստոսի 19-ին ժամը 12.00-ից 14.00-ն ՀՀ ԳԱԱ նախագահության շենքում (Մարշալ Բաղդամյան 24): Հուղարկավորությունը՝ ՀՀ ԳԱԱ նախագահության շենքից ժամը 14.00-ին:

Համաշխարհային բյուզանդագիտությունը եւ հայագիտությունը մեծագույն կորուստ կրեցին: Կյանքի 84-րդ տարում իր մահկանացուն կնքեց ականավոր գիտնական, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի, Աթենքի ակադեմիայի եւ Հռոմի «Տիբերիսա» արվեստի, գրականության եւ գիտության ակադեմիայի ակադեմիկոս Հրաչ Միքայելի Բարթիկյանը:

Հ. Բարթիկյանը ծնվել է 1927 թ. Աթենքում, բաւասեր-հրապարակախոս Միքայել Բարթիկյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական վարժարանում: 1945 թ. ավարտել է հունական գիմնազիան: 1946 թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: 1953 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Ուսումնառությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ընթացել է Լենինգրադում ակադ. Հ. Օրբելու ղեկավարությամբ: 1958 թ. Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրներ»

թեմայով, որը ռուսերենով լույս է տեսել Երեւանում 1961 թ.: 1971 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Բյուզանդական Դիզենիս Ակրիտաս Էպոսը եւ նրա նշանակությունը հայագիտության համար» թեմայով:

1957 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, 1980-2010 թթ. ղեկավարել է նույն ինստիտուտի միջին դարերի պատմության բաժինը, եղել է գլխավոր գիտական աշխատող: Պատրաստել է բազմաթիվ գիտական կադրեր:

Շուրջ 150 գիտական հոդվածներից գատ, լույս է ընծայել 17 գիրք: «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ» մատենաշարով հրատարակել է բյուզանդական մի շարք հեղինակների աշխատությունների հայերեն թարգմանությունները՝ ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով (Պրոկոպիոս Կեսարացի, Կոնստանդին Ծիրանածին, Հովհաննես Սկիլիցես, Թեոփանես Խոստովանող, Թեոփանեսի Շարունակող, Պարթենիոս Աթենացի): Գիտությունների ակադեմիայի «Գրական հուշարձաններ» մատենաշարով հայերեն հրատարակել է «Դիզենիս Ակրիտաս» Էպոսը, Մատթեոս Ուռուխյեցու «Ժամանակագրության» աշխարհաբար թարգմանությունը, Պրոկոպիոս Կեսարացու «Գաղտնի պատմությունը», «Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Հանրապետության շրջանում (1918-1920)» աշխատությունը:

«Հայ-բյուզանդական հետազոտություններ» հոդվածների եռահատոր ժողովածուի համար ակադեմիկոս Զ. Բարթիկյանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի: Հունարենով հրատարակել է «Բյուզանդիան հայկական աղբյուրներում», «Բյուզանդիա եւ Հայաստան», «Գավրասների բյուզանդական ազնվականական ընտանիքը» գրքերը: Զ. Բարթիկյանն օրերս էր ավարտել Միքայել Ատտալիատեսի «Պատմության» եւ Իոաննիս Կ. Խասիոտիսի «Պատմական ավանդույթ եւ քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ 1876-1996 թթ.» աշխատությունների թարգմանությունները:

Ծանրակշիռ գիտական ժառանգության համար 1980 թ. ընտրվել է Աթենքի ակադեմիայի, 1987 թ. Հռոմի «Տիբերինա» արվեստի, գրականության եւ գիտության ակադեմիայի, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: Նա 1995 թվականից Հայաստանի գրողների միության անդամ էր:

1981 թ. Բարթիկյանը դարձել է Հունաստանի Բյուզանդական Հետազոտությունների Ընկերության, ապա Հունական Քաղաքակրթության Հաստատության պատվավոր անդամ, արժանացել է ՀՀ ԳԱԱ «Մետրոպ Մաշտոց» մրցանակի, Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի Արիստոտելի անվան մեդալի:

Լայն ու ընդգրկուն էր ակադ. Զ. Բարթիկյանի գիտական հետազոտությունների շրջանակը: Նրա վաղ շրջանի ուսումնասիրությունները նվիրված են պավլիկյան շարժմանը: Ակադեմիկոսի գիտական գործունեության մեջ Բագրատունյաց եւ հետբագրատունյաց դարաշրջանների Հայաստանի ու Բյուզանդիայի բազմաբնույթ կապերի մանրագնի ընկալությունն առանձնահատուկ տեղ է գրավում: Զ. Բարթիկյանը շեշտակիորեն ընդլայնեց հիմնահարցի աղբյուրագիտական հենքը՝ շրջանառության մեջ ղեկավարելով բյուզանդական աղբյուրների մի ամբողջ շարք:

Զ. Բարթիկյանը մեծ վաստակ ունի նաեւ վիմագիր արձանագրությունների ու կնիքների ուսումնասիրության բնագավառում: Ի դեպ, առաջինը Զ. Բարթիկյանն է ընթերցել Գառնիի բաղնիքի հունարեն հայտնի

արձանագրությունը: Նա Հայոց պատմության ակադեմիական նոր բազմահատորյակի խմբագրական խորհրդի անդամ էր, Երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը:

Գիտնականի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ է գրավում Կիլիկյան Հայաստանի եւ Բյուզանդիայի կապերի հետազոտումը:

Հրաչ Բարթիկյան մարդու, քաղաքացու եւ գիտնականի բարոյական բարձր նկարագրի հատկանշական կողմերից էին ուղղամտությունն ու սկզբունքայնությունը: Նրա անսահման բարությունն ու հոգատարությունը նկատելի էր իր գործունեության բոլոր ոլորտներում: Նա հատկապես ուշադիր էր երիտասարդ գիտական սերնդի նկատմամբ: Հրաչ Բարթիկյանն իր երկրի իսկական քաղաքացին էր, նա ապրում էր շնչում էր իր հայրենիքի հոգսերով, ուրախանում հաջողություններով: Նրա համար հայրենիքը բարձրագույն արժեք էր, երկրին բաժին հասած դժվարությունները հավասարապես իրենն էին:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն
ՀՀ Հայագիտության եւ հասարակական
գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
ԵՊՀ Պատմության ֆակուլտետ

Շայերեն տպագրության 500-ամյակին
ընդառաջ (1512-2012)

Աշխատագիրեց Էր. Բաղդասարյանը

Եթե բոլոր մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատվասիրություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ:
Ղազարոս Աղայան

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած առարկայացած մեր վիշտը, զոհանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձերը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը: ... Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները:
Ավետիք Իսահակյան

ՄԱՆՏՈՑՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՐԱՎԵՐԺՈՂ ՈՒԿՆ

Հայկական գիրը աշխարհի հնագույն և ինքնատիպ այբուբեններից է: Այն ստեղծել է Մաշտոցը 405 թվականին: Դա ժամանակի ու պատմության թելադրանքի արգասիք էր, գալիք արհավիրքներին դիմակայելու հայ ժողովրդի հոգևոր գրահը:

Հինգերորդ դարի սկզբին հայ Արշակունի թագավորների գահատոհմը մայրամուտ էր ապրում: Թագավորության վերացումից հետո Հայաստանը պիտի բզկտվեր ու դառնար ամեն տեսակ հրոսակի ոտքի կոխան: Ինչի՞նչ կարող էր կառչել հայ ժողովուրդը, ի՞նչ լուսավոր հենասյան պիտի կռթներ մեջքը: Ազգային դիմագիծը պահելու և իր գոյությունը հարատև դարձնելու ամենահուսալի զենքը մայրենի լեզուն էր, իսկ մայրենի լեզուն հավերժական դարձնելու միակ միջոցը՝ ազգային գիրը: Եվ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը: Հայն սկսեց կարդալ ու հասկանալ հային: Ոչինչ չէր կարող ազգն այնպես միավորել, ինչպես ազգային գիրը: Մաշտոցյան այբուբենը հնարավորություն տվեց պատմության դաժան ճամփաներով անցնող հայ ժողովրդին իր հոգեւոր գանձերը փոխանցել մի դարից մյուսը,

անցյալը կապել ներկայի, ներկան՝ գալիքի հետ: Եւ 405 թվականից հետո գրագետ դարձան հայկական դարերը: Հայոց այբուբենը հոգևոր ավիշ է, որով ներարկվել են բոլոր հայերը: Տառերի գյուտի ամենամեծ խորհուրդն այն էր, որ հայ երեխաները հաճախեցին հայկական դպրոց և Հայաստանում օտարալեզու (մասնավորապես՝ հունական ու ասորական) դպրոցները տարածում չգտան: Հայկական դպրոցը դարձավ նենգադավ ձուլումից հայությունը պահպանելու ամենավստահելի վահանը: Հայերեն գրված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», հավաստում է, որ հայ ժողովուրդը գրավոր խոսքի է անցել իմաստնաբար: Մաշտոցը ստեղծել է 36 տառ, որոնք լրիվ համապատասխանում են հայ մարդու արտաբերած բոլոր հնչյուններին:

Հայկական այբուբենի մասին ֆրանսիացի ականավոր լեզվաբան Անտուան Մեյեն գրել է. «Հայտնի է, որ հայ այբուբենը գլոխագործոց մըն է: Հայ հնչաբանական հնչյունն երեն յուրաքանչյուրը հատուկ նշանով մը նոթագրված է, և այդ համակարգը այնքան լավ հաստատված է, որ հայ ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր առանց փոփոխություն մը կրելու: Ատոր հետևանքով Հայաստան ունեցավ ճկուն գրական լեզու մը, որ հայուն բառապաշարին բոլոր արժեքները կարտաբերե: Այսպես կազմվեցավ գրական լեզու մը, որը ճոխ է և որ կրնար արտահայտելու ամեն ինչ, որ հույն լեզուն կարող էր բացատրել: Այդ լեզվին ճոխությունն ու ճկունությունը ուժ մը եղած է հայ ազգին համար»: Գրավոր խոսքի անցնելուց հետո հայերենի «ճոխությունն ու ճկունությունը» երևաց հենց սկզբից՝ Աստվածաշնչի թարգմանության ժամանակ: Երևի քչերը գիտեն, որ Սուրբ գիրքը աշխարհի բոլոր լեզուներում կոչվում է Բիբլիա, և միայն հայերենն է, որ ի գորու է եղել ճշգրիտ թարգմանել այն՝ Աստվածաշունչ: Լեզվի գեղեցկության հետ հայերեն Աստվածաշունչն ունի մի այլ արժանիք ևս. այն, լինելով խիստ հայեցի, միաժամանակ զարմանալիորեն ճիշտ է արտացոլում բնագրի միտքն ու ոգին: Այդ պատճառով էլ ֆրանսիացի նշանավոր գիտնական Լա Կրոզը Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարել է թագուհի բոլոր թարգմանությունների մեջ: Իսկ ռուսինացի նշանավոր բանասեր Նիկոլա Յորգան գրել է. «Աստվածաշնչի Ձեր թարգմանությունը ասկե 15 դար առաջ մեկն է ամենեն մեծ հոգեկան հաղթանակներեն, զորս երբևիցե ժողովուրդ մը կրնա տարած ըլլար պատմության մեջ»:

Մաշտոցյան այբուբենով միայն Աստվածաշունչը չէ, որ թարգմանվեց :Հին աշխարհի նշանավոր հեղինակների շատ գործեր էլ թարգմանվեցին հայերեն: Այժմ համաշխարհային մշակույթի մի շարք երկեր, որոնց բնագրերը կորել են, պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Մաշտոցյան այբուբենով ստեղծվեց նաև ինքնուրույն հայկական գրականություն ու գիտություն: Հայ գրավոր խոսքի համամարդկային արժեքը ավելի դիպուկ է բնորոշել Անտուան Մեյեն. «Երբ կազմավորվել է հայ գրականությունը, ժամանակակից Եվրոպայի մեծ ազգերից ոչ մեկը չկար դեռևս, ոչ Ֆրանսիայի մասին խոսք կար, ոչ էլ Անգլիայի: Հայ ազգային գրական հեղինակություններն այնպիսի հնություն ունեն, որ շատ դարերով գերազանցում են

Եվրոպական ազգերի մեծամասնության հեղինակություններին: Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ, այն ժամանակներում, երբ Ֆրանսերենը դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարեւոր գրականություն»: Հազարազանձ հայերենով են գրվել մարդկային մտքի փառահեղ շատ կոթողներ, այդ թվում* Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» հանճարեղ երկը, փիլիսոփաներ Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի երկերը, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նշանավոր «Թղթերը», Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու, Նահապետ Քուչակի անզուգական բանաստեղծությունները, Միքայել Նալբանդյանի, Մկրտիչ Պեշկեթաշյանի, Ռաֆայել Պատկանյանի հուրիարատող տողերը, մեծանուն Ռաֆֆու հայրենաշունչ վեպերը, Պետրոս Դուրյանի, Հովհաննես Թումանյանի, Վահան Թեքեյանի, Շիրվանզադեի, Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Գրիգոր Ջուրայի, Արշակ Չոպանյանի, Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Չորյանի, Ավետիք Իսահակյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի գրական գոհարները, մեծ երգիծաբաններ Հակոբ Պարոնյանի և Գրիգոր Օտյանի դասական գործերը:

Ներկայումս մարդկությունը խոսում է երկու հազարից ավելի լեզուներով: Համարյա չորսից մեկը խոսում է չինարեն: Մեծ թիվ են կազմում անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, արաբերեն, ճապոներեն, ֆրանսերեն խոսողները: Կենդանի բոլոր լեզուների մեջ խոսողների քանակով հայոց լեզուն գրավում է 38-րդ տեղը: Հայերենը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է:

Մաշտոցյան գրի ստեղծումից հետո հայերեն տառերն օգտագործվել են նաև իբրև թվարժեքներ: Այդ տառաթվերով են ստեղծվել միջնադարյան Հայաստանի ճշգրիտ գիտություններին վերաբերող բոլոր գրքերը: Հայերեն 36 տառերը գրվել են 9-ական տառ պարունակող 4 շարքով, որոնք համապատասխանորեն նշանակում են՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ:

- w = 1 d = 10
- p = 2 h = 20
- q = 3 l = 30
- η = 4 ju = 40
- b = 5 θ = 50
- q = 6 y = 60
- t = 7 h = 70
- p = 8 δ = 80
- p = 9 η = 90

- σ = 100 υ = 200 j = 300 ւ = 400 շ = 500 ո = 600 չ = 700 պ = 800
- ք = 900 ու = 1000 ս = 2000 վ = 3000 տ = 4000 ռ = 5000 ց = 6000
- ւ(ու) = 7000 փ = 8000 ք = 9000

Այս 36 տառերի զուգորդմամբ կարելի է գրել 1 -ից մինչև 9999 բոլոր ամբողջ թվերը, օրինակ, ծա = 51, ռջդ = 1990, քշղթ = 9999: Հետագայում հայկական այբուբենում ավելացված օ տառը նշանակել է 10000: Մեծ թվերի համար հայերն ունեցել են հատուկ անվանումներ և պայմանաշաններ: Օրինակ, 10000-ը անվանել են բյուր և նշանակել՝ Ա, որը դրվելով տառ- թվանշանի վրա, այն մեծացրել է 10000 անգամ: Այսպես՝

$$\hat{w} = 10000, \hat{p} = 20000,$$

$$\hat{t} = 100000, \hat{p} = 90000000.$$

ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան

XIX դ. 60-ական թվականներին հասարակական կյանքի ամենահուզող հարցը ճորտերի ազատագրումն էր: Բայց ի՞նչ ուղիով՝ ռեֆորմիստական, թե՞ հեղափոխական-դեմոկրատական: Այդ հարցի լուծումից էր կախված քաղաքական-հասարակական զարգացման հետագա ընթացքը: Ահա այստեղ է, որ հայ կղերա-ֆեոդալական, վաշխառուա-բուրժուական և լիբերալ-բուրժուական խմբավորումները միացան ցարական ռեակցիային և պաշտպան կանգնեցին ռեֆորմիզմին: Այդ վճռական պահին էր, որ Ստ. Նազարյանը հայ երիտասարդներին որպես «մինույն թագավորության որդիների», խոհեմության կոչ էր անում: Նա գտնում էր, որ Ռուսաստանին միացած հայերն արդեն ազատագրված են, «քաղաքականապես ռուս են» և նրանց միակ պահանջը պետք է լինի տնտեսագիտության և մշակութային ասպարեզում առաջադիմելը: Նա չէր հակադրվում հայ եկեղեցուն, այլ պահանջ էր դնում, որ եկեղեցին ևս վերանորոգվի լուսավորության ուղիով: Այն ժամանակաշրջանում, երբ հայ բուրժուազիան Ռուսաստանում դեռևս թույլ էր ու երկչուտ, զուրկ էր ուժեղ տնտեսական հիմքից և ամուր քաղաքական դիրքերից, Ստ. Նազարյանը և նրա համախոհները գտնում էին, որ հայ ժողովուրդը քաղաքական կենսունակություն չունի, ուստի և որևէ ազգային-քաղաքական վերակենդանացման հարց չպետք է դնի: Հենց այդ գաղափարներն էին արտացոլվում Ստ. Նազարյանի և հայ բոլոր լիբերալների աշխարհայացքում:

Ղրիմի պատերազմից հետո Թուրքիայի վրա էլ ավելի ուժեղացած եվրոպական ազդեցության շնորհիվ երկրում լայն ընթացք է ստանում լուսավորական-լիբերալ շարժումը: «Երիտասարդ Թուրքիա» խումբը նպաստում է բուրժուական գաղափարախոսության տարածմանն ու քաղաքական շարժումների ձևավորմանը: Նպաստավոր այդ պայմաններից և հատկապես «Թանգիմաթի» հուսադրող խոստումներից ցանկացան օգտվել արևմտահայերը, Կ.Պոլսի, Ջնյուռնիայի և Վասպուրականի մտավորականներն ու հասարակական խմբերը: Այդ հողի վրա էլ ծավալվեց սահմանադրական շարժումը: Առաջ եկան բազմաթիվ ընկերություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ, մաստնական սրահներ, պարբերականներ: Նոր թափով սկսեց զարգանալ ոգեշնչող և քաղաքական պայքարի կոչող հրապարակախոսությունը:

Ուշագրավ է արևմտահայ մամուլի արագ աճը: 40-ական թվականներին լույս տեսնող 3 անուն կրոնական բնույթի պարբերականների փոխարեն 1860-ական թվականներին արդեն հրատարակվում էին մոտ 40 անուն թերթեր և հանդեսներ: Նոր տպարաններ են հիմնվում Սեբաստիայում, Վանում, Մուշում և այլ վայրերում: Առավել կարևոր է այն, որ մամուլը սկսում է իր ազդեցության տակ առնել նաև գյուղական բնակչությանը:

Եվրոպական կենտրոններում ուսում ստացած երիտասարդներից շատերը մեկնում են գավառները՝ ոգեշնչված ժողովրդին մոտ լինելու և նրան լուսավորելու ու քաղաքական կյանքի կոչելու գաղափարներով: Այդ պայմաններում սկսում է զարգանալ ազգային շահերի գիտակցությունը: Աշխատավորության շահերը գիտակցող մտավորականությունը սկսում է հակադրվել թուրք փաշաներին և նրանց կամակատար- հայ ամիրաներին:

Սրվում են քաղաքական և դասակարգային հակասությունները:

Լուսավորական շարժումը և լիբերալ-բուրժուական մտածողությունը արագորեն լայն ասպարեզ են ստանում: Հատկապես առևտրական բուրժուազիան, որ միջնորդի դեր էր կատարում, շփումների մեջ էր Եվրոպայի հետ, հաղորդակից եվրոպական լուսավորությանը, նկատելի աշխուժություն առաջացրեց հայկական լիբերալ մտքի զարգացման գործում:

Լուսավորական շարժման ներկայացուցիչները համախմբվել էին «Մեղու», «Մասիս», «Ծաղիկ», «Կիլիկիա» և այլ պարբերականների շուրջը, որոնք լայն ասպարեզ էին բացում աշխարհաբարի զարգացման և սահմանադրական գաղափարների տարածման համար:

Սակայն ժամանակի հասարակական և քաղաքական, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումների հարցերում լիբերալները հարազատ մնացին պահպանողականների ռեֆորմիստական ծրագրերին, հակադրվեցին դեմոկրատիզմին:

Լիբերալիզմի և դեմոկրատիզմի անջատումը միանգամայն օրինական էր. ամենահանգուցայինը ժողովրդական մասսաների ազատությունն է, իսկ այդ լուծելու համար պետք է հասկանալ, թե ինչպիսի հասարակական ուժեր, ինչպիսի դասակարգեր են կանգնած լիբերալիզմի թիկունքում և դեմոկրատիայի թիկունքում, ինչպիսի քաղաքական ձգտումներ են ընկած այդ դասակարգերի տևյալ մեջ: Հեղափոխության հիմնական հարցերում լիբերալիզմը թեքվում է դեպի պահպանողականության ճահիճը: Սակայն լիբերալների շարքերում կային նաև Ռուսինյանի նման գործիչներ, որոնք հետադիմության հակառակորդներն էին, ցանկանում էին ֆրանսիական հեղափոխության սկզբունքները տարածել հայկական կյանքում և Հայաստանը տեսնել ազատ ու ինքնավար: Բայց նրանք հեռու էին կանգնած ժողովրդից, նրա առօրյա հոգսերից ու քաղաքական պայքարից:

Ընդհանուր լուսավորական շարժումները և քաղաքական-հասարակական մտքի զարթոնքն ընդգրկեցին նաև գավառահայությանը: Դրա համար պարարտ հող էին ստեղծել գավառներում զարգացող առևտուրն ու արդյունաբերությունը: Գավառներում նույնպես սկսեց ձևավորվել գյուղական բնակչության ճակատագրով մտահոգված մտավորականություն: Նարողնիկական հովերով տարված այդ մտավորականությունն էր, որ սկսեց մտահոգվել գավառահայության պահանջներով: Նրանք խարազանում էին գավառի խավարամտությունը, քուրդ և թուրք վերնախավի ճնշումները, հայ վաշխառուների կեղծիքներն ու չարաշահումները: Սակայն, երբ հարցը հասնում էր տիրող քաղաքական կարգերին, նրանք ցուցաբերում էին երկչուտություն և անվճռականություն:

Բեռլինի կոնգրեսից հետո գավառահայ մտավորականությունն առհասարակ տոգորվում էր այն համոզմամբ, որ հայ ժողովուրդը կարող է ազատագրվել միայն քաղաքական ուժի, ապստամբական շարժումների միջոցով: Թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում, և թե՛ հայ գաղթավայրերում հասունացող հասարակական քաղաքական հոսանքներից հայ գյուղացիության, մշակների ու պանդուխտ սովյալների, ինչպես նաև քայքայվող մանր արտադրողների շահերի պաշտպանը և նրանց համար համառ ու հետևողական պայքար մղողը հեղափոխական-դեմոկրատական հոսանքն էր Ռուսաստանում և դեմոկրատական շարժումն Արևմտյան Հայաստանում:

Շար. 8